

ի սուրբ ուխտն Գանձասար, որ է կաթողիկոսարան Աղուանից. եւ յարեցաւ առ կաթողիկոսն Յովհաննէս. եւ ուսեալ սաղմոս եւ դիր, եւ արարին զնա աւագ սարկաւագ. եւ ետուն փիլոն եւ վեղար: Եւ էր ճարտասան ի լրբութիւնս եւ ի խօսս անզգամս եւ անպատշաճս: Եւ առաքեաց զնա կաթողիկոսն ի յերկիրն վասն պիտոյից վանիցն: Իսկ նա զնացեալ ձեւացոյց զինքն վարդապետ եւ քարոզէր թիւր եւ անուղիղ՝ հայհոյանս եւ չարաբանութիւնս... վասն որոյ եկին եւ գանդատեցին զնմանէ կաթողիկոսին: Եւ կաթողիկոսն առաքեաց < արս > եւ բերին զնա ի վանքն... էառ զփիլոնն եւ զվեղարն եւ ստէ... կացցես ի վանս [եւ] ծառայ միաբանիցս»: «էր տեսլեամբ դժնեայ... արագախօս եւ ճարտարալեզու... ծիծաղէին զնա տեսանողքն... վասն որոյ չարացաւ նա քան զստանայ... գաղտ ելեալ ի վանացն եւ զնաց ի Գանձակ քաղաք եւ եդերծ գերեսն եւ զլլուխն եւ զնացեալ առ իշխանն Գաւութ խան... եւ գանդատեաց նմա, թէ քարոզեցի զՄահմէտ մարգարէ գոլ. յայսմ պատճառէ այսպէս խայտառակ արար զիս կաթողիկոսն եւ էառ զկարգն իմ»:

Սանր իրեն կը կանչէ կաթողիկոսը, տուգանքի կ'ենթարկէ զանիկա եւ կը հրամայէ. «տուր զմա զկարգ իւր եւ զիր քարոզելոյ: Եւ յահէ խանին ետ ի նա զոր ինչ կամէրն. եւ խանէն եւս էառ հրաման» (48):

Այսպէս թէ կաթողիկոսէն եւ թէ խանէն